



ՀԱՅԱՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«17» 07 2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 126 - 24

Նախաձեռնող՝

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
Կոտայքի մարզ, Եղվարդ համայնք,
Չարենցի 198/2-2

Գործունեությունը՝

«Լոռի-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված
տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա
միջավայրի վրա ազդեցության ուղղման արձանագրության
էկոլոգիական գնահատում
Լոռու մարզ

Առդիր՝ 12 թերթ

քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

Լոռու մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7%-ը, մարզը՝ 3799ք/կմ տարածքով ամենամեծն է հանրապետության հյուսիսային մարզերից: Այն հանդիսանում է հանրապետության հյուսիսային դարպասը, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (110 կմ երկարությամբ), արևելքից՝ Տավուշի, արևմուտքից՝ Շիրակի, հարավից՝ Կոտայքի և Արագածոտնի մարզերին: Մարզն ընդգրկում է նախկին Գուգարքի, Ստեփանավանի, Սպիտակի, Թումանյանի, Տաշիրի տարածաշրջանները: Լոռու մարզն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանն ամբողջությամբ: Ունի ոչ հարթ ռելիեֆ, տարածքի մոտ 80%-ը զբաղեցնում են լեռնաշղթաները և խոշոր լեռները: Նրա տարածքով են ձգվում Զավախքի, Բազումի, Փամբակի, Գուգարաց, Վիրահայոց, Հալաբի լեռնաշղթաները: Առանձնանում են Փամբակի, Լոռվա գոգավորությունները և Լոռվա ձորը: Մարզի տարածքով է հոսում Դեբեդ գետը (154 կմ երկարությամբ, 2-րդը հանրապետությունում)՝ իր Ձորագետ, Մարցագետ և Փամբակ վտակներով: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Հարուստ է հանքային ջրերի աղբյուրներով: Բնակավայրերը գտնվում են ծովի մակերևույթից 520-ից 1800 մ բարձրության վրա:

Մարզն աչքի է ընկնում համեմատաբար խոնավ կլիմայով: Միջին և բարձրադիր գոտում կլիման բարեխառն լեռնային է, տևական ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Օդի միջին ջերմաստիճանը տատանվում է ձմռանը -4.8°C -ից մինչև $+18^{\circ}\text{C}$ ամռանը: Այստեղ տեղումների քանակը բավականին մեծ է, տարեկան դիտարկվում են 600-700 մմ մթնոլորտային տեղումներ: Նախալեռնային գոտում կլիման մերձարևադարձային է՝ չափավոր շոգ և չորային ամառներով, մեղմ ձմեռներով:

Մարզը հարուստ է անտառային և լեռնատափաստանային տարածքներով, ինչպես նաև մերձալպյան մարգագետիններով: Անտառային պետական ֆոնդը կազմում է 101205 հա, որից անտառածածկ է 86 հազ. հա-ն: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը:

Մարզում առկա են 3 արգելավայրեր («Գյուլագարակի», «Մարգահովիտի», «Կովկասյան մրտավարդի»), ընդհանուր՝ 17 576 հա մակերեսով, 1 բուսաբանական այգի և 2 դենդրոպարկ:

Մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում:

Մարզի տարածքում հանքարդյունահանման աշխատանքներ են իրականացնում շուրջ 35 կազմակերպություններ, որոնցից 4-ը իրականացնում են մետաղական հանքավայրերի շահագործում (շահագործվում է Շամլուղի պղնձի, Թեղուտի պղինձ-մոլիբդենային և Մղարթի ու Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը:

«Լոռի-3» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծերում ներառված բնակավայրերը ներառում են Փամբակի ջրավազանային կառավարման տարածքները):

Մարզի տարածքով անցնում են Հյուսիս-Հարավ և Արևելք-Արևմուտք միջպետական նշանակության Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման, Վանաձոր-Թումանյան-Վրաստանի սահման և Վանաձոր-Դիլիջան-Ադրբեջանի սահման մայրուղիները, ինչպես նաև Երևան-Գյումրի-Վանաձոր-Թումանյան-Թբիլիսի և Հրազդան-Իջևան երկաթգծերը:

Երկաթուղու գլխավոր գծի երկարությունը կազմում է 107 կմ (հանրապետականի 14.7%-ը), որի վրա գտնվում են 12 գործող կայարաններ:

«Լոռի-3»-ի շրջանը գտնվում է Լոռու բուսաբանա-աշխարհագրական ֆլորիստական շրջանի հարավ-արևմտյան մասում:

Դիտարկվող տարածաշրջանում հանդիպում են կենդանիներ, որոնց կարգաբանական խմբերից շատ տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում:



2022թ. հուլիսի 1-ի դրությամբ Լոռու մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 0844.0 հա, որից՝ վարելահող 41977.1 հա, բազմամյա տնկարկներ՝ 447.6 հա, խոտհարքներ՝ 35058.4 հա, արոտավայրեր՝ 145 593.8 հա, այլ հողատեսքեր՝ 27767.1 հա: Մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են 7553.559 հա:

Մարզը հարուստ է ջրային, հանքահումքային և ռելիեֆային ռեսուրսներով:

Միկրոռեգիոնալ տարածական պլանավորման հիմնադրությամբ փաստաթղթի մշակման հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել բարենպաստ ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում արտացոլվում են միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար:

«Լոռի-3» Թումանյանի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծն ընդգրկում է Թումանյան խոշորացված համայնք՝ Թումանյան համայնք, Աթան, Ահնիձոր, Դսեղ, Լորուտ, Մարց, Շամուտ, Չկալով, Քարինջ բնակավայրեր /9 բնակավայր/:

«Լոռի-3» միկրոռեգիոնի տարածաշրջանը ներառում է 28682.73 հա հողեր, այդ թվում՝

- բնակավայրեր – 3578.76 հա,
- արդյունաբերության – 669.48 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի – 371.92 հա,
- հատուկ պահպանվող տարածքներ – 285.4 հա,
- հատուկ նշանակության – 56.37 հա,
- անտառային – 4800.93 հա,
- ջրային – 258.07 հա,
- պահուստային – 0 հա:

Հեռանկարային զարգացման շրջանակներում համայնքների հողային ֆոնդի՝ նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունները՝ ներկա վիճակում և հեռանկարում ունենալու են հետևյալ բաշխվածությունը.

Թումանյան համայնք՝

- համայնքի հողերի ընդհանուր մակերեսը՝ 10.828.52 հա,
- բնակավայրի հողեր՝ 997.82 հա, հեռանկարում՝ 981.478 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 91.68 հա, հեռանկարում՝ 113.768 հա,
- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 93.00 հա, հեռանկարում՝ 87.254 հա,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 6.82 հա,
- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 282.45 հա,
- անտառային հողեր՝ 9288.58 հա,
- ջրային հողեր՝ 68.17 հա, հեռանկարում՝ չեն փոխվում:

Աթան բնակավայր՝

- բնակավայրի հողերի ընդհանուր մակերեսը՝ 26650.13 հա,
- բնակավայրի հողեր՝ 702.37 հա, հեռանկարում՝ 695.085 հա,



- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 124.71 հա,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 219.37 հա,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 411.84 հա,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 23707.96 հա,

- անտառային հողեր՝ 46472.21 հա,

- ջրային հողեր՝ 171.99 հա:

Շամուտ բնակավայր՝

- բնակավայրի հողերի ընդհանուր մակերեսը՝ 17949.42 հա,

- բնակավայրի հողեր՝ 583.61 հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 84.06 հա,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 33.51 հա,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 73.64 հա,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 7892.47 հա,

- անտառային հողեր՝ 8601.06 հա,

- ջրային հողեր՝ 681.07 հա:

Չկալով բնակավայր՝

- բնակավայրի հողերի ընդհանուր մակերեսը՝ 4.091.37 հա,

- բնակավայրի հողեր՝ 383.95 հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 28.57 հա,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 32.88 հա,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 36.11 հա,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3488.13 հա,

- անտառային հողեր՝ 122.09 հա:

Քարինջ բնակավայր՝

- բնակավայրի հողերի ընդհանուր մակերեսը՝ 15.821.61 հա,

- բնակավայրի հողեր՝ 821.135 հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1.244.88 հա,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 53.92 հա,


- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 148.09 հա,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 13.456.04 հա, հեռանկարում՝ 13.385.785 հա,

- անտառային հողեր՝ 122.09 հա:

- ջրային հողեր՝ 45.71 հա:

Համայնքի/բնակավայրերի համար, որպես հեռանկարային զարգացման առաջարկներ ներկայացվել են մարդու կենսագործունեության բոլոր ոլորտները ներառող գործունեության համար համապատասխան տարածքների հեռանկարային զարգացումը, որը նախատեսվում է



ինչպես նախկինում առանձնացված տարածքի իրացման, այնպես էլ բնակչության հեռանկարային աճով պայմանավորված անհրաժեշտ նոր տարածքների ընդգրկմամբ:

Համայնքի մանրամասն վերլուծությունը, առանձին բնակավայրերի համար ինժեներաերկրաբանական հետազոտության աշխատանքների իրականացման և միկրոսեյսմաշրջանացման քարտեզների կազմման, ինչպես նաև բնակավայրերի վերլուծությունն ըստ հատակագծային պայմանների, քաղաքաշինական հիմնականայնքի, ինժեներական ենթակառուցվածքների ապահովվածության, վերլուծությունն ի հայտ են բերում մի շարք խնդիրներ, որոնց հրատապ լուծումը պետք է նպաստի տարածաշրջանի կենսագործունեությանը և հողերի ռացիոնալ օգտագործմանը:

Առաջնային ուղղություններ են տարածքային զարգացման այն հիմնական ուղղությունները, որոնց մեջ ներդրումները նպաստավոր են այդ ոլորտների կայացման և զարգացման համար: Այդ ուղղությունների ընտրությունը կխթանեն.

- արտադրության գոյություն ունեցող հիմնական ճյուղերի զարգացումը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպումը,
- շրջակա միջավայրի բարելավումն և պահպանումը,
- ինժեներական ենթակառուցվածքի, ճանապարհային ցանցի և սոցիալ- կենցաղային համակարգի զարգացումը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովումը,
- միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհները կապող

հատվածների վերանորոգում, միջհամայնքային ճանապարհների-կապերի վերանայում և կազմակերպում,

- բացառել գյուղատնտեսական բարձորակ և հատուկ պահպանվող տարածքների օտարումը, ինչպես նաև պատմամշակութային և բնական հուշարձաններին վնաս պատճառումը,

- հիմնական գործառնական գոտիների վերանայում և հստակեցում,
- բոլոր համայնքների գազաֆիկացում,
- համայնքներում բնակչության ապահովումը խմելու ջրով,
- համայնքներում ոռոգման ջրի ցանցի արդիականացում և ընդլայնում,
- աղբավայրերի նախատեսում սանիտարական գոտիների պահպանմամբ,
- բոլոր գյուղական բնակավայրերի կոյուղացում,
- գյուղական բնակավայրերի կեղտաջրերի մաքրման կայանի նախագծում և

գործարկում:


- նախատեսել նոր տեխնոլոգիաներ ջեռուցման ժամանակ՝ արևային էներգիա և

բիոգազ,

- նախատեսել աղբի տեսակավորում:

Հաշվի առնելով զբոսաշրջության պոտենցիալը դիտարկվող տարածաշրջանում՝ ինչպես բնակչության, այնպես էլ այցելուների համար հանգստի կազմակերպումը նախատեսված է հատուկ պահպանվող տարածքների՝ հանգստի համար նախատեսված տարածքների շրջանակում:

Տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծում արտացոլված են բնական պաշարների (ջուր, հող, բուսականություն, հանքեր) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային, պրակտիկ գործունեության, տնտեսության ճիշտ կազմակերպման, կոմունիկացիաների և կաթսայատների ճիշտ տեղադրման արդյունքները՝ անթափոն



տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ՝ կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործման և վնասագերծման ճանապարհով:

Միկրոռեգիոնի բնակավայրերում առկա են սոցիալ-կենցաղային, ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների վերաբերյալ հիմնախնդիրներ, որոնք մանրամասն նկարագրված են նշված համայնքների զարգացման ծրագրերում:

Ներկա իրավիճակում բնակչության հիմնական զբաղմունքն է՝ բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկի մշակումը, հողագործությունը և առևտուրը:

«Լոռի-3» տարածաշրջանի համայնքների շրջակա միջավայրի վրա տեխնաժին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումն արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումն արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,

անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքների շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Համաձայն հաշվետվության՝ բնակավայրերում ֆոնային աղտոտվածությունը չի գերազանցում սահմանված նորմերը, քանի որ ներկայում համայնքներում խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ չկան:

Թումանյան քաղաքային և գյուղական բնակավայրերում ֆոնային կոնցենտրացիաները չեն գերազանցում թույլատրելի նորմերը:

Թումանյան խոշորացված համայնքի, Թումանյան քաղաքի ներքին ցանցի շուրջ 90%-ը մաշված է, ունի կապիտալ վերանորոգման կարիք:

Աթան, Ահնիձոր, Դսեղ, Լորուտ, Մարց, Շամուտ, Չկալով, Քարինջ, Քոբայր բնակավայրերի տարածքների սպասարկումը «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի գործառույթներից դուրս է:

Տարածաշրջանի ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է՝ բնակչության խմելու-կենցաղային, արդյունաբերական և հակահրդեհային ջրապահանջներն իրականացվում են մեկ ջրատարով: Ելնելով տարածաշրջանի կառուցապատված տարածքի և ներկայացվող նոր գլխավոր հատակագծով կառուցապատման ենթակա տարածքների նիշերի մեծ տարբերությունից, իրարից կտրտվածությունից և ռելիեֆային պայմաններից, ցանցերում պահանջվող ջրաքանակ և ճնշում ապահովելու նպատակով ջրամատակարարման ցանցը բաժանվում է մի քանի գոտիների:

Ջրամատակարարման ներքաղաքային բաշխիչ ցանցը չունի ջրամատակարարման գոտիներ, որոնց բացակայությունը դժվարեցնում է համակարգի շահագործումը: Ջրամատակարարման գլխամասային կառույցները և գոյություն ունեցող օրվա կարգավորիչ ջրամբարների սանիտարական պահպանության առաջին գոտիները, ինչպես նաև ամբողջ ցանցը կարիք ունի կապիտալ վերանորոգման: Ներկա դրությամբ Թումանյան քաղաքային համայնքի ջրամատակարարումը կազմում է 3962.0 հազ. մ³/օր:

Համաձայն հաշվետվության Թումանյան քաղաքի հեռանկարային զարգացման ժամանակաշրջանի համար անհրաժեշտ է ունենալ 2500 մ³ ընդհանուր ծավալով 0.49-մլր:

Թումանյան համայնքի ջրամատակարարման և ջրահեռացման վիճակը բարելավելու համար անհրաժեշտ է.



- Ջրամատակարարման Թումանյան-Շնող գործող համակարգի գլխամասային կառույցների, սնող ջրատարի վերակառուցում, վերականգնում՝ կորուստների վերացումով:
- Թումանյան-Շնող գործող ջրատարից Թումանյան քաղաքին տրվող ջրամատակարարումն իրականացնել պոմպակայանի միջոցով:
- Ջրամատակարարման ներքին բաշխիչ ցանցի գոտիավորում, վերակառուցում, վերականգնում՝ համաձայն հիդրավիկական հաշվարկների:
- Ջրի որակի նկատմամբ ամենօրյա լաբորատոր հսկողություն:
- Անհատական ջրաչափերի տեղադրում բոլոր սպառողների մոտ:
- Քաղաքի չկոյուղացված տարածքների կոյուղացում:
- Կենսաբանական մաքրման կայանի նախատեսում Թումանյան քաղաքի տարածքում: Դա հնարավորություն կտա կեղտաջրերը լրիվ մաքրումից հետո միայն լցնել գետը՝ հաշվի առնելով նաև մակերևութային ջրերն աղտոտումից պահպանելու պահանջները:
- Նախքան քաղաքի կոյուղու ցանցի մեջ լցնելը՝ արտադրական ձեռնարկությունների տեխնիկական ջրերի նախնական մաքրում:

Համայնքի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման արդյունքում տեղի կունենա՝

- ջրային ռեսուրսների պահպանություն, տնտեսում և կայուն օգտագործում,
- ջրամատակարարման համակարգի հուսալիություն,
- հոսակորուստների կրճատում,
- ջրի սպառման արդյունավետության բարձրացում,
- բնակչության ջրամատակարարման տևողության ավելացում,
- խմելու ջրի բարձր որակի ապահովում և աղտոտման վտանգի նվազում:

«Լոռի-3» միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի խմելու-տնտեսական, արտադրական և հակահրդեհային կարիքների համար պահանջվող հաշվարկային ջրապահանջը հաշվարկվել և ներկայացվել է հաշվետվությունում:

Համաձայն հաշվետվության Թումանյան համայնքի բնակավայրերում բացակայում է կոյուղու մեխանիկական մաքրման կայանը: Թեև քաղաքն ունի կոյուղու կոլեկտոր, որը բավարար վիճակում է գտնվում և գործաձվում է, սակայն քաղաքի հոսքաջրերը հավաքվելով քաղաքից մոտ 8 կմ հեռավորության վրա թափվում են Դեբետ գետը՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ:

Գյուղական բնակավայրերի բնակչությունն օգտվում է բակային հորատիա զուգարաններից:

Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով նախագծի շրջանակներում նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր բնակավայրերը: Կոյուղու հոսքաջրերի հեռացումն իրականացնել միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով:

Նախագծով կենցաղային կոյուղուն զուգահեռ նախատեսվում է կառուցել նաև հեղեղատար կոյուղի, ինչը հնարավորություն կտա անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս հավաքել և, նախքան բաց ջրահոսքեր ուղղելը, ենթարկել մաքրման:

Հեղեղատար ցանցերը՝ կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից, կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով:

Հաշվի առնելով ոռոգման կանոնավոր բաշխիչ ցանցերի բացակայությունը գոտեի բոլոր համայնքներում՝ ոռոգման ջրի անհարկ կորուստներից խուսափելու, ինչպես նաև տնամեծ



հողատարածքների արդյունավետ ոռոգում ապահովելու նպատակով նախատեսվում է բնակավայրերի տարածքում փակ խողովակաշարերով ոռոգման ներտնտեսային բաշխիչ ցանցի կառուցում, որոնք կանցկացվեն փողոցներին զուգահեռ՝ յուրաքանչյուր հողակտորի համար ունենալով մեկ ջրթող կառուցվածք:

«ԼՈՌԻ-3» միկրոռեգիոնի բնակավայրերը հիմնականում գազաֆիկացված են: Թումանյան քաղաքում ջեռուցումն իրականացվում է հիմնականում բնական գազով, իսկ գյուղական բնակավայրերի ջեռուցումն իրականացվում է՝ 80% գազով և 20% փայտով:

Էլեկտրահաղորդման օդային գծերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար:

Բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 28682.73 հա մակերես: Ներկայումս՝ «Լոռի-3»-ի Թումանյանի տարածաշրջանի բնակավայրերից Թումանյան քաղաքի հյուսիս-արևմտյան հատվածում գործում է աղբավայր, որը սպասարկում է ամբողջ համայնքին: Աղբավայրը թերի է շահագործվում և առաջացնում է լուրջ բնապահպանական, առողջական և կյանքի անվտանգության ռիսկեր:

Գյուղական բնակավայրերում չկան պահանջվող նորմերին համապատասխան աղբավայրեր: Գյուղական բնակավայրերի աղբը ևս տեղափոխվում է Թումանյան քաղաքի աղբավայր:

«Լոռի-3»-ի տարածաշրջանի բնակավայրերում տեղակայված է ընդհանուր թվով 11 գերեզմանոց՝ ընդհանուր 48 հա մակերեսով: Գերեզմանոցները գրեթե բոլորը գործող են: Գերեզմանոցներում սանիտարական պահպանման գոտին հիմնականում պահպանված չէ, չեն համապատասխանում նորմերին, գործող է թիվ 2 գերեզմանոցը, որը սահմանազատված չէ առկա են բազմաթիվ նորմտափվ խնդիրներ:

Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերին համապատասխան: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում: Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

Համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Գյուղերում ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են և մեքենաների անցուդարձը ցածր է:

«Լոռի-3» կատարված աշխատանքների արդյունքում կարելի է եզրակացնել, որ տարածաշրջանի զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը:

Բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումները հետևյալն են՝

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում,
- ՀՀ պետական բյուջեով 2023-3024 թթ. և 2024թ. նախատեսվող պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման ծրագրերի իրականացում,
- համայնքի ջրամատակարարման ցանցի մաշված հատվածները վերանորոգել,
- համայնքի բնակավայրեր մուտք գործող ջրատարների ջրերի վարակազերծումը կատարել քլորակայաններում;
- էներգաարդյունավետությանը և վերականգնվող էներգիայի աղբյուրների ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում,
- հաշվի առնելով, որ արդյունաբերական և կոմունալ-կենցաղային կեղտաջրերի մաքրման համար անհրաժեշտ է ավելի մեծ հզորություն և մեծ սանիտարապաշտպանիչ գոտի



- ունեցող մաքրման կայան, նախատեսել մաքրման կայանի վերակառուցում ապահովելով մյուս բնակավայրերի կեղտաջրերը (լրիվ բիոլոգիական մաքրում և կրկնակի մաքրում),
- ներդնել աղբահանության ինտեգրված համակարգ՝ տարածաշրջանային սանիտարական աղբավայրի և փոխաբեռնման կայանների կառուցմամբ, որը հնարավոր է սպասարկի 2 մարզ;
 - բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում;
 - շենքերում էներգետիկ արդյունապետությունն ապահովող միջոցառումների իրականացում,
 - շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում;
 - ջրամատակարարման համակարգի և կոյուղու կառուցման համակարգերի բարելավում և բարեկարգում;
 - անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում;
 - գետ թափվող տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի վերակառուցում /նախատեսելով կենսաբանական մաքրում/ նախագծում և կառուցում,
 - վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերակառուցում և հիմնանորոգում,
 - ոռոգման ներքին ցանցի վերականգնում;
 - կաթիլային ոռոգման համակարգի ներդրում,
 - ջրամբարների կառուցում՝ ջրի արդյունավետ օգտագործման նպատակով,
 - համայնքի բնակավայրերում հանգստյան գոտիների ստեղծում;
 - համայնքների տարածքում աղբահանման և ազրի տեսակավորման կազմակերպում;
 - մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում);
 - հեղեղապաշտպան անտառատնկումների իրականացում
 - ճանապարհի եզրերին, ռեկրեացման գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում;
 - անտառների հիմնման և ընդլայնման աշխատանքների իրականացում:
 - խիստ վերահսկողության սահմանում մեքենաների տեխնիկական վիճակի և որակի վրա, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը;
 - անցնել լրիվ գազով և ժամանակակից ջեռուցման տեխնոլոգիաներին, ինչը կկրճատի մթնոլորտ արտանետումները՝ տարեկան 39.47 տ/տարի;
 - արդյունաբերությունում ներդնել առաջատար տեխնոլոգիաներ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կանխելու նպատակով:
 - գյուղատնտեսական հողերի բերրիության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:
 - Հայաստանի կլիմայի փոփոխության բացասական հետևանքների մեղմման համար հարմարվողականության միջոցառումները
 - Ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների/պոչամբարների հեկուլտիվացում/փակում, որն իր մեջ ներառում է ինժեներական, մեխորատիվ և կենսաբանական մի շարք միջոցառումներ:

Շեռանկարում բնակչության թվի ավելացման, IV-V դասի արդյունաբերական ձեռնարկությունների շահագործմանը, անասնապահության, հողագործության գարգացման հետ զուգահեռ նկատվում է օդի, հողային և ջրային պաշարների աղտոտվածության անընթաց ավելացում, սակայն նախատեսված բնապահպանական միջոցառումների ներդրման արդյունքում (ավտոտրանսպորտի արտանետումների վերահսկում, կեղտաջրերի մաքրման



կայանների շահագործում, թափոնների կառավարում), տարածքը մնում է թույլ աղտոտվածության գոտում, այսինքն նորմերի սահմաններում:

«Լոռի-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի գործունեության ընթացքում իրականացվելու է ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն: Դա թույլ կտա հիմնադրույթի գործունեության ընթացքում վերլուծել և դիտարկել համայնքների զարգացման իրատեսական սցենարները՝ նախանշելով առավել գրավիչ և արդի հեռանկարային ուղղությունները, ներդրումների համար ուշագրավ ոլորտները, ինչպես նաև տարածաշրջանի բնապահպանական խնդիրների ներգրավման և դրանց հնարավոր լուծումներին ուղղված համապատասխան միջոցառումները:

Հիմնադրույթային փաստաթղթի նախագծով նախատեսվում է նաև ջրային ռեսուրսների ու թափոնների կառավարման ոլորտների և խախտված հողերի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացման ծրագրերի կազմում և իրականացում:

Պատճառաբանական մաս. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, ինչպես նաև դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման հիերարխիական կառուցվածքի (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) երեք մակարդակը միավորող փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը:

Փորձաքննության գործընթացում միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը լրամշակվել է՝ հաշվի առնելով նաև շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումների, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Փորձաքննության բոլոր փուլերում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում ազդակիր համայնքի ներկայացուցիչները դրական են արտահայտվել հիմնադրույթային փաստաթղթի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, «Լոռի-3» միկրոռեգիոնում ընդգրկված համայնքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Բնակավայրերի տարածքների կարևոր էկոլոգիական հիմնախնդիրների լուծումները կնպաստեն տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների (մթնոլորտ, ջրային ռեսուրսներ, հողեր, ընդերք, կենսաբազմազանություն) վիճակի բարելավմանը և պահպանմանն ուղղված միջոցառումների հեռանկարները:



Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
- Միկրոռեգիոնում քաղաքաշինական հեռանկարային լուծումներն իրականացնելիս՝ բացառել անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:
- Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

ԵԶՐԱՓՈՒԿ ՄԱՍ

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի «Լոռի-3» միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Արմինե Վարդանյան